

կը ծագի րաւոյ՝ յորնակէն: որով ո՛չ թէ ր-ի փո-
փոխութիւն: այլ պարզապէս ջնջում կայ:

Գ.

Բառին սկիզբը.

1.—կ իւրաքանչեւ զ առհասարակ կը
վերածուի կ ձայնին: ինչ որ ալ ըլլայ յաջորդ
ձայնաւորը. բայց այս կ ձայնը մեղ աւելի զգա-
լի կը լինի ու ըստ ձայնաւորներէն առաջ,
քան Կ, ի Կօ, իւ ձայնաւորներէն. ասոր ալ պատ-
ճառը ուրիշ քան չէ, բայց եթէ այն որ մարդ-
կային լեզուին ստիպուած է Կ, ի Կօ, իւ ձայններէն
առաջ կ (ինչպէս նաև Բ) հնչելու. ուրիշ խօսքով
մենք չենք կարող ըտուրովին մաքուր կ, կի, կօ,
կիւ կամ Բ, Բի, Բօ, Բիւ արտասանել. այլ այս
արտասանութեան ժամանակ՝ Կ, ի Կօ, իւ ձայ-
ներուն ընտելանք կը պահանջէ՝ որ անպատճառ
դոնէ խիստ փոքրիկ յ կիսաձայն մը գայ աւելնայ
կ կամ Բ ձայնին վրայ:

Ընդհանուր մարդկային ձայնախօսական
այս օրէնքին պատճառաւ է որ լատիներէնի ց, շ
ձայնները օ և ի ձայնաւորներէն անմիջապէս առաջ՝
նորալատին լեզուներուն մէջ՝ անշուշտ նախապէս
ց և կ քան ձայններէն անցնելէ ետք՝ վերածուած են՝
Ֆրանս. փ, ու իտալ. չ, չի, սպան. ղ, Թ, ձայնե-
րուն. նոյն դերքով օ գերմաներէնի մէջ վերած-
ուած է ց-ի. նոյնպէս հին յունարէնի ց ձայնը Կ
և ի ձայններէն անմիջապէս առաջ՝ վերածուած է
միջին յունարէն փ, իսկ նոր յունարէն յ:

Օր. կյանք՝ գանձ (երգ). կյո՛ւնք՝ գառն.
կյո՛ւնքան՝ գաւազան. կյո՛ւնք՝ գոռալ. կյո՛ւնք՝ գո-
մէշ. բայց կերքնուկ՝ գորտ-նուկ. կի՛նի՝ գինի.
կօ՛ղ՝ դող. կյիւ՛ր՝ գայլ. այսինքն կյերքնուկ, կյի՛նի,
կյօղ, կյիւ՛ր և լին: Մնացեալ օրինակները տես էջ 19:

Կ ձայնէն վերջ ա կամ ր Կ ձայնը չի պատա-
հեր:

2.—գ. Այսպէս են գիշար՝ գիտել, գիտենալ.
գիւրջ՝ գերի և գիւրթ՝ գուլպայ:

3.—փ. Այսպէս են՝ փրօ՛ղ՝ գլուխ, փրօ՛ղ (Գործ
կիշէր)՝ գրեւոր. փնօ՛ղ՝ գնալ:

Բառի մէջ՝

1. Ստորական ձևը Բ է. այսպէս են՝ րա՛մ-
վրէր (Թ. րամբոր, Գ. րամբրէր)՝ թագաւոր. ճո՛ւր-
օգուտ. ճի՛ւսի (Թ. ճոփի, Գ. ճոփի)՝ հոգի. իջի՛-
նալ. ճո՛ւր (Գ. ճո՛ւր)՝ ազի:

2. Բ ձայնը Գործի ըստ ձայնի մէջ գարձեալ
Բ կը մնայ. օր. ճո՛ւր (Գ. ճո՛ւր)՝ տագ. ծո՛ւր
(Գ. ծո՛ւր)՝ ծագել. ըրի՛նք (Գ. ըրի՛նք)՝ արեգակ:

3. Կ ունին շնիկա՛ւ շողա՛ւ, աղիկա՛ւ՝ աղ-
գակա՛ւ. և ո՛ւնի՛ն՝ անդին (Թանկագին քար):

4. Գ, ց պահած են մզան՝ հմ. և կեցա՛ս
դանդա՛տ ըստերը:

5. Ե ձայնը գէպքէ մէջ մնայ. այն է ըրի՛ն-
քնա՛լ՝ արեգակ որ ընչպէս տեսանք գործածական
է նաև ըրի՛նքնա՛լ ձևով:

Բառի վերջ՝

1. Երբ բառ մը կը վերջաւորի գ-ով՝ որմէ
անմիջապէս առաջ ալ ձայնաւոր մը կը գտնուի:
այդ գ ձայնը բուն Ղարաբաղի բարբառին մէջ կը
վերածուի Բ ձայնին. եղած ըտուր օրինակներն են.
մնա՛րա՛յ՝ մարագ. ճրէ՛րա՛յ՝ ճրագ. վի՛րա՛յ՝ վեգ. արիւ-
րա՛յ՝ սարկաւագ. պաղա՛րա՛յ՝ պատարագ. ճո՛րհի՛յ՝
ուրագ. ծի՛րա՛յ՝ ծիգ. ամուր. Կի՛րա՛յ՝ էգ. կնա՛րա՛յ՝
կագ. կի՛րա՛յ՝ քոգ. գիւրի: Գործի բարբառը՝ որուն
անծանօթ է Բ ձայնը, այս բառերուն մէջ ալ
Բ-ի տեղ պարզապէս Բ կը գնէ. ընչպէս՝ մնա՛րա՛յ,
ճրէ՛րա՛յ և լին:

2. Երբ բառավերջի գ-էն առաջ և ձայնը
գտնուի, գ-ը կ'ստանայ ց ձևը. այսպէս են՝ ճի՛նք՝
հինգ. զմից՝ զանգակ րանց՝ թանգ. սուգ. ծն-
ոռնց՝ ժառանգ: Գործի բարբառին անծանօթ
լինելով ց ձայնը, այս բառերը՝ կ'ստանան պար-
զապէս ճի՛նքնա՛լ զմից, րանց, ծնոռնց ձևերը:

Ետունք՝ բառը բուն Ղարաբաղի բարբա-
ռով ստացած է ղի՛նքնա՛լ, իսկ Գործի բարբառով
ղի՛նք, ղի՛նքնա՛լ ձևերը:

Գ-ով վերջացող ուրիշ բառ չկայ Ղարաբաղի
բարբառին մէջ: Բայց կէս գրական ազգ բառէն
որ ազի ձևն է ստացած:

(Կը շարունակուի)

Հրաչեայ Յ. Աճառեան



ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՍՊԵՆՆԵՐԸ

Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(ԲՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ և ՈՒՍՈՒԱԾՔ)

(Շարունակութիւն) *

Ը.

ՏԻԳՐԱՆԻ ԱՌԱՍՊԵՆԸ.

Աղբիւրը:—Ու թիւնք է առնում մեր պատ-
մագիրը Տիգրանի պատմութիւնն ու առաս-
պելը: Դ՛ր. գիրքի մէջ Տիգրանի գովեստն ան-

լիս յիշում է ժողովրդական երգերը. «Զոր-
մէ ասէին ի հինն մեր, որք բամբուսմն եր-
գէին»: Եւ ապա աւելացնում է. «Եւ զինչ
ինձ ի զիրս յայս արդեւք, բան սիրե-
լի քան թէ որ յաղագս սորա էին գովեստք
և պատմութիւնք յերկարել: Պատմագիրն
ուրեմն պարզապէս յիշում է: որ «ի հինն»
հնոց մէջ (Խորենացու ժամանակի նկատ-
մամբ) երգեր ու գովեստներ եղել են և թէ
իւր զրաժը քաղուած է այդ երգերից:

Այնուհետեւ սակայն երգեր չէ՛ յիշում:
Եթէ ոչ մի աղբիւր յիշած չլինէր, պէտք է
ընդունէինք անհրաժեշտօրէն, որ յաջորդ
գլուխների համար ևս իբրեւ աղբիւր ծառա-
յել են սկզբում յիշած երգերը: Բայց Տիգ-
րանի և Աժգահակի առասպելը պատմելիս
(Իժ—Լ. գլուխներ) աղբիւրը յիշում է: մի-
այն անորոշ ձեւերով. «որ պատմէն» (ԻԾ.),
«ասէ» (ԻԶ. ԻԹ. Լ.), «պատմի և այս» (Լ.):

Թէպէտ ոչ մի տեղ Մար Արասի անունը չէ
տալիս, բայց ոմանք Մար Արասից քաղած են
համարում այդ պատմութիւնը, ի նկատի ու-
նենալով, թերեւ, որ ուրիշ տեղերում Մար
Արասի համար գործածած է միայն «ասէ»
բայը: Այսպէս հ. Ստեփանէն իւր թարգմա-
նութեան մէջ (եր. 384. ծան. 149) գրում
է. «Որ պատմէն խօսքը վերաբերում է ոչ
թէ Աժգահակին, ինչպէս հասկացել է Էմինն,
այլ հաւանօրէն Մար Արասի Կաթինային»
Եւ նա ինքն այդ խօսքը թարգմանում է.
«ինչպէս պատմում է»: Սակայն չգիտեմ ինչ
հիման վրայ «Որ պատմէն» բառացի նշանա-
կում է. «պատմողը» «նա որ պատմում է»:
Պէտք չէ աչքից փակցնել, որ այդ բայը ե-
զակի է և վերջաւորութիւնն ունի է առաւով
խի վերջի 2 տառը յօդ է միայն, որ յաճախ
գրւում է բայերի վրայ:

Եթէ «որ պատմէն» նշանակում է «պատ-
մողը», ինքն ըստ ինքեան երևում է, որ
այդտեղ տպագրի մէջ մի բառ պակասում է,
զի անհնթութիւն է ասել թէ Աժգահակ
տեսնում է ապագան «ի ձեռն անըջականաց
իմն նախատեսութեանց» օրինակաւս այսուիկ
որ պատմէն»:

Մայր Աթոռի զրադարանի ձեռագիր-
ների մէջ գտնում ենք այդ պակաս բայը՝

«ասէ», որով և ճիշտ ընթերցուածը Այս-
տեղ Ա. տեսակի ձեռագիրները, ինչպէս և Տ.
տեսակից «Տուրք, դեղութիւն» ունեցողները
(№ № 248, 1663, 1668), նոյնպէս և «Տուրք,
դեղութիւն» ունեցողներից երեքը (№ № 249,
1661 և Սարգիս եպիսկոպոսի ձեռագիրը)¹
ունին. «Օրինակաւս այսուիկ ասէ որ պատմէն»,
այս կերպ է ասում պատմողը»:

Ո՞վ է այդ պատմողը: Մար Արաս: Ա-
ռաջին հայեացքից զարմանալի է թւում, որ
հինգ անգամին ևս մեր պատմագիրն անորոշ
է թողնում իւր աղբիւրը և բաւականանում
է ասելով առաջին անգամ՝ «ասում է պատ-
մողը», և այնուհետեւ՝ միայն «ասում է»:
Խորենացին, որ այնքան մեծ կշիռ է տալի
զրաւոր աղբիւրներին, Մար Արասի անունն
այստեղ այսպէս անորոշ թողնել չէր կարող:
Իսկ ընդհակառակն, երգը կամ առասպելը,
որ մի անգամ իբրեւ աղբիւր յիշել է ԻԴ.
գլխի մէջ, կարող էր յաջորդ ԻԾ—Լ. գլուխ-
ների մէջ անորոշ թողնել, որպէսզի ինչպէս
մի տեղ նկատել է շնորհ. Միաբան², յա-
ճախ չերեւար թէ օգտուել է միայն երգից
կամ առասպելից: Եւ շնորհ. Միաբանն այս
հիման վրայ—ինչպէս և Լ. գլխի մէջ եղած
թուելիաց երգերի յիշատակութիւնն ևս
Տիգրանի և Աժգահակի պատմութեան համար
մի աղբիւր համարելով, եզրակացնում է «երե-
ւում է որ վիպասանների երգը Աժգահակի
պատմութեան կից շարադրում էր եւ նրա
սերնդեան՝ Վիշապագունների գրոյցները: Իս-
կապէս մենք տեսնում ենք Տիգրանի և Աժ-
գահակի հետ հանդէս դուրս գալիս և Ար-
շակունի Արտաշէսին և Սաթենիանը կամ
Սաթինիանը, և Արգամ—Արգաւանին և Ար-
տաւազին: Այս ըլլորը ամբողջովին առնուած
են վիպասանական երգից, նաեւ (sic) թուելիաց
երգերից»³:

1. Այս վերջին երեք ձեռագիրների կազմում են
մի առանձին խումբ Տ. տեսակի ձեռագրների մէջ: Պէտք է
նկատել, որ ձեռագիրների մի մասը «պատմէն» բառը ե-
ւով ունին, որ սխալ է: Մենք ձեռագիրների քննութեան մէջ
մտնել չենք ուզում:

2. Խոր. պատմ. Ռուսում. եր. 74.

3. Նոյն. եր. 81.

Վիպասանաց և թուեկաց երգերը, դիտենք, նոյնն են։ Վիպասանաց երգ չէ յիշում Տիգրանի համար, այլ միայն բամբուռները։ Իսկ որ Խորենացին Աժդահակի և Տիգրանի առասպելի համար օգտուած լինի թուեկաց կամ վիպասանաց երգերից և մանաւանդ թէ այդ առասպելի մէջ, իրրեւ շարայարութիւնն, զուրս եկած լինէին Արտաշէս, Սաթենիկ, Արգաւան, Արտաւազդ—այդ մասին ոչ մի հիմք չունինք։

Տեսնենք Խորենացու գրածը, որ մեզ արգէն մի երկու անգամ պատահած է ուրիշ առթիւ։ Մեր պատմագիրը Լ. զլխի մէջ պատմելով թէ Տիգրանը Մարաց գերիներին և Աժդահակի կնոջը բնակեցնում է յարեւելեայ ուսոց մեծի լիւրինն մինչև ի սահմանս գողթանն, յարում է. «Եայտնեն զայս ճշմարտապէս եւ թուեկացն երգը... յորս շարին բանք երգոցն զԱրտաշիսէ և զորդւոց նորա, յիշելով այլաբանաբար և զգարմիցն Աժդահակայ՝ վիշապազունս զնոսա կոչելով, զի Աժդահակդ ի մեր լեզուս է վիշապ։ Այլ և ճաշ ասեն զործել Արգաւանայ» և ինչ։

Ի՞նչպէս պէտք է հասկանալ Խորենացու այս խօսքերը։

Նախ՝ յիշատակութեան ձևից. «Եայտնեն զայս ճշմարտապէս եւ թուեկացն երգը», «նաեւ թուեկաց երգերը» պարզ երեւում է, որ մեր պատմագիրն իւր արած պատմութեան համար ուրիշ աղբիւր է ունեցել, թէ չէ ինչո՞ւ պէտք է գրէր, թէ այս յայտնում են նաեւ թուեկաց երգերը։ Այստեղից ուրեմն բնաւ եզրակացնել կարելի չէ թէ Խորենացին Տիգրանի և Աժդահակի պատմութիւնն առնում է թուեկաց երգերից, այլ այն միայն՝ թէ Խորենացու՝ ուրիշ աղբիւրից առած պատմութեան նման մի բան պիտի պատմուած լինէր և վկայութեան կանչուած թուեկաց երգերի մէջ։

Ապա՝ կարելի չէ ընդունել մինչև անգամ թէ թուեկաց երգերը վկայութեան են կոչուած Տիգրանի եւ Աժդահակի ամբողջ պատմութեան համար։ Խորենացու խօսքերը մեզ իրաւունք չեն տալիս այդպէս հասկանալու։ Ուրիշ խօսքով, «այս» գերանունն տակ ոչ թէ Տիգրանի և Աժդահակի

ամբողջ պատմութիւնը կարելի է հասկանալ, այլ բնականօրէն միայն Լ. զլխի պատմութեան երկրորդ մասը, թէ Աժդահակի զարմերը, նորա կին Անոյշը և մարացի գերիները բնակում են Մասիսի մերձակայքում։ Թէ այդպէս պէտք է հասկանալ այդ երեւում է հետեւեալներից։

Առաջին՝ պատմագիրը պարզ ասում է թէ թուեկաց երգերի մէջ պատմում է «զԱրտաշիսէ և զորդւոց նորա» և թէ այդ երգերը յիշում են «այլաբանաբար եւ (նաեւ) զգարմիցն Աժդահակայ՝ վիշապազունս զնոսա կոչելով»։ Ուրեմն թուեկաց երգերը խօսում են իսկապէս Արտաշէսի և նորա որդիների մասին և յիշում են նաեւ վիշապազունը։ Իսկ «զարմք Աժդահակայ» որ Խորենացին հասկանում է իրրեւ Մարք, ինչպէս գիտենք, Խորենացու մեկնութիւնն է, որ նա ուրիշներից, առասպելը պատմողներից է առնում։ Եթէ այդ մեկնութեան սկզբնական աղբիւրը նոյն իսկ վիպասանները եղած լինին, մարդիկ կողմանն գինաւէտ գաւառին Գողթանս—մի բան որ շատ հաւանական է—գարձեալ Խորենացու խօսքերից այսքանը միայն կարելի է եզրակացնել թէ վիպասանները թուեկաց երգերի մէջ պատմել են Արտաշէսի և նորա որդիների հետ և վիշապազանց կամ վիշապների մասին, բայց Աժդահակի զարմեր, այսինքն Մարք են համարել այդ վիշապազունը։ Որպէսզի Տիգրանի և Աժդահակի ամբողջ պատմութիւնն էլ հետը հասկանայինք, պատմագիրը երգերի բովանդակութիւնը գոնէ հետեւալ ձևով պէտք է բերած լինէր. «Երս շարին բանք երգոցն եւ զԱրտաշիսէ և զորդւոց նորա»։ Նաեւ Արտաշէսի և նորա որդիների մասին։ Բայց քանի որ այդ «նաեւ» շարկապն ևս չկայ, ուստի ոչ մի ձևով կարելի չէ հասկանալ թէ թուեկաց երգերի մէջ եղել է Արտաշէսի, նորա որդիների ու վիշապանց պատմութեան հետ նաեւ Տիգրանի և Աժդահակի ամբողջ պատմութիւնը։ Եզրակացուած թուեկաց երգերի բովանդակութեան մէջ ոչ մի ակնարկութիւն չկայ Տիգրանի և Աժդահակի ամբողջ պատմութեան վրայ, ուստի և հիմունք չկայ կարծելու թէ պատմագիրն այդ պատմութեան

Համար վկայութեան կոչած լինի թուելեաց երգերը:

Երկրորդ՝ «այս» դերանուան տակ Տիգրանի և Աժգահակի ամբողջ պատմութիւնը կարելի չէ հասկանալ, որովհետեւ մինչդեռ պատմագիրն այդ պատմութեան մասին յիշատակութիւն չէ անում երգերի բովանդակութեան մէջ, յատկապէս և մանրամասն կանգ է առնում Մասիսի վիշապաղանց վրայ: Եւ բերում է թուելեաց երգերից մի քանի հատուածներ, որոնք, իրեն խորհնացու խօսքով, են «անյայտ իրք վիշապաց, որք են յազաւն ի վեր ի Մասիս»: Իրաւունք չունինք կարծելու, թէ նա աննպատակ և անկապ բան է անում: Եթէ նա իւր վերելում գրած պատմութեան համար վկայութեան է կանչում թուելեաց երգերը, բերելով անոնց բովանդակութիւնը, ըստ ինքեան հասկանալի է, որ ներքեւի վկայութիւնը և բերած կտորները մի հաստատութիւն պիտի համարուին վերեւի պատմութեան համար և յարմարուն այդ պատմութեանը: Արդ, վերելում պատմել է թէ Աժգահակի առաջին կինն Անոյշ և բազումք ի սերմանէ Աժգահակայ և ուրիշ շատ մարացի գերիներ բնակում են յարեւելայ ուսոց մեծի լերինն, յանգորրութեան սպառնաւոր վրածի մեծի լերինն առ ոտամբ լերինն (Մասեաց), իսկ ներքեւում նա վկայութեան կոչելով թուելեաց երգերը, առանձնապէս կանգ է առնում Մասիսի վիշապների կամ վիշապաղանց վրայ, որ ինչպէս գիտենք, հասկանում է իրրեւ մարք և զարմք Աժգահակայ: Եւստ պարզ է ուրեմն, որ ներքեւում գրած՝ Մասիսի վիշապների ու վիշապաղանց (=մարաց, զարմից Աժգահակայ ըստ մեկնութեան) առասպելի կտորները բերում են իրրեւ վկայութիւն վերելում գրած պատմութեան համար թէ Անոյշ և Մարաց գերիները, զարմք Աժգահակայ, բնակած են Մասիսի ստորոտներում:

Այսպէս, խորհնացու այդ վկայութիւնից տեսնում ենք նախ՝ որ նա Տիգրանի և Աժգահակի պատմութիւնն ամբողջ ուրիշ աղբիւրից է առնում և ոչ թէ թուելեաց երգերից: Եւ ապա՝ վերջին երգերը, այն էլ «ճշմարտապատմութիւն» շինած, վիշապք և վիշապա-

զունք մեկնած իրրեւ մարք և զարմք Աժգահակայ, վկայութեան են կոչուած պատմութեան միայն վերջին մասի համար, որ է «վասն Անուշայ առաջին կնոջն Աժգահակայ և վասն բնակութեան գերեզն» Մարաց առ ոտամբ լերինն Մասեաց:

Եթէ թուելեաց կամ վիպասանաց երգերից չէ առած Տիգրանի և Աժգահակի պատմութիւնը, կարող է ուրիշ երգերից առած լինել: Ըստ ինքեան մի անհաւանական բան չէ այդ, բայց մենք ընդունել չենք կարող, իրրեւ միակ հիմունք գուցէ կարողանար ծառայել այն առարկութիւնը թէ ինչ—Լ. գլուխների մէջ անորոշ թողած ձեւերը՝ «ասէ», «որ պատմէն», կարող են նախընթաց ԻԴ. գլխի մէջ յիշուած երգերին վերաբերել: Արդարեւ, թուելեաց երգերի բովանդակութեան մէջ (Ա. Ի.) մի տեղ երգի համար եղակի «ասէ» բայն է գործածած. «Եւստ անց անէ, գնաց և շինեաց ի մէջ Մարաց զՄարակերա»: Սակայն երգերի համար այս եղակի «ասէ» ընթերցուածը շատ կասկածելի է, քանի որ նոյն տեղում ութ տողի մէջ երեք անգամ յոգնակի «ասեն» ենք գտնում իսկ մի անգամ «ասէ»: Ուրիշ տեղերում ևս երգերի և առասպելի համար յոգնակի թուով է գնում բայը: Եւ զարմեալ, եթէ Աժգահակի և Տիգրանի առասպելի մէջ լոկ «ասէ» բայը այսպէս երգի համար հասկանալ աշխատենք, ոչ մի ձեւով կարելի չէ աղբիւրի առաջին անգամ յիշատակութիւնը. «ասէ որ պատմէն» երգի համար հասկանալ: Միթէ երգի համար կարելի է ասել թէ «ասում է նա» որ պատմում է, պատմողը: Այդ «պատմողի» համար է գրած անշուշտ և յաջորդ «ասէ» ձեւերը:

Ո՞վ է արդ այդ «պատմողը» որի անունը չէ տալի խորհնացին: Արդեօք Մար Արաւ: Այս պիտի լինէր հարկաւ առաջին ներթադրութիւնը: Սակայն խորհնացու Մար Արասից օգտուելու եղանակի ուսումնասիրութիւնը և ապա Մար Արասի (ըստ խորհնացու) և Անանունի (որ Մար Արասից է առած) համեմատութիւնը ցոյց կբաց մեզ, որ այստեղ Մար Արաս չէ նորա աղբիւրը: Մար Արաս և Անանուն:—խորհնացին Մար Արասից օգտուելիս կամ նորա անունն է տա-

լի կամ պատմագիրն նոյն պատմագիրն, ժամանակագիրն կոչում նորան: Ա. զբքի Թ. զլիսի մէջ դնում է իւր ծրագիրը. «Արդ ի նոյն մատենէ (Մար Աբասի) սկսեալ ասացից Յապետոսթէ, Մերոզ, Սիրաթ, Թակլագ, որ է Յարեթ, Գոմեր, Թիրաս, Թորգոմ: Յետ որոյ նոյն ժամանակագիրը (Մար Աբաս) յառաջ մատուցեալ ասէ. Հայկ, Արմենակի և զայլան ի կարգի, զորոյ յառաջագոյն ասացաք: Արդ, յառաջագոյն յիշած անունների կարգը, (ցանկը) գտնում ենք Ե. զլիսի մէջ այսպէս. Յարեթ, Գոմեր, Թիրաս, Թորգոմ, Հայկ, Արմենակ, Արմայիս, Ամասիա, Գեղամ, Հարմայ, Արամ, Արա, Կրնշանակէ Խորենացին Հայկից մինչև Արա գեղեցիկ պիտի քաղէ Մար Աբասից: Այդպէս էլ արեւ է նա, մի քանի բան միայն ուրիշներից առած, աւելացրած է:

Ուշագրութիւն պիտի դարձնել այն հանգամանքի վրայ, որ ինչ որ Խորենացին Մար Աբասից քաղած է դնում գրեթէ բոլորը կայ Անանունի (Մար Աբաս Մծուրնացու) մէջ: Այստեղ մի քանի բան միայն համառօտ է. ինչպէս՝ Արամի անունն է միայն յիշուած: Չէ յիշուած Շամիրամի մահուան մասին միայն: Անշուշտ չկան և այն ամենը, որ Խորենացին ուրիշ աղբիւրից է առնում: ինչպէս ինչ որ ԺԲ. զլիսի մէջ, Մար Աբասից օգտուելուց յետոյ՝ աղբիւրը փոխելով, գրում է անորոշ ձևով՝ «ասեն», «ասին», «ասի» Բզնունեաց, Մանաւազեանց և Խոռոխոռունեաց մասին: Չկան Անանունի մէջ նաև Արագած, Երասխ, Շիրակ, Փռախոտ, Յուակերտ, Մասիս, Գեղ, Գեղաքունի, Սիւնիք (Սիսական), Գեղամի, Գոռնի անունների ստուգաբանութիւնները կամ այն պատճառով, որ Անանունը համառօտ է կամ թէ Խորենացու իրեն յարմարեցրածներն են ուրիշներից առնելով կամ իրենից: Եւ այս աւելի հաւանական է:

ԺԶ. զլիսի պատմութիւնը, Վան քաղա-

քի շինութեան նկարագիրը Խորենացին իրենից է անում: Դնելով իրրե աղբիւր, «որպէս ասեն», «որպէս լսեմք» ևն: Ուստի և այս նոյնպէս չկայ Անանունի մէջ: Մնացածը գրեթէ բոլորը, ինչ որ Մար Աբասից է առնում: Աշտարակաշինութիւնից մինչև Արա գեղեցիկ և Ասորեստանցոց ախրապետութիւնը, գտնում ենք Անանունի մէջ:

Այնուհետև արդէն Խորենացի և Անանուն տարբերում են: Եւ այդպէս էլ պէտք է լինէր, քանի որ Խորենացին Արա գեղեցիկից յետոյ, ինչպէս ինքն ասում է, զանազան աղբիւրներից «յարմարելով կարգում է» իւր պատմութիւնը: Մար Աբասն անշուշտ մնում է իրրե աղբիւր, բայց նա միակ և զլիսուոր աղբիւրը չէ: Ուստի և նա ԺԹ. զլուին սկսում է աղբիւրների մանրամասն յիշատակութեամբ և թէ ինքն ինչպէս է օգտուում այդ աղբիւրներից: Մենք այդ հատուածն ամբողջ կարտագրենք, զի յետոյ էլ պիտի պէտք գայ մեզ:

«Որ ինչ զկնի մահուանն Համիրամայ, Յարմաբեալ զամենայն կարգեցից քեզ ի գիտս յայտնի (այսինքն Ա. զբքի մէջ) զազգիս մերոյ զաւագադոյն զարս և զնախնիս և որ ինչ վասն սոցա զրոյցք և իրակութիւնք իւրաքանչիւր, ոչ ինչ կամամտածական և ոչ ինչ անպատշաճ ի սմա յարմարելով՝ բանս այլ որ ինչ ի գրոց. իսկ ըստ նմանաց ապա եւ որ ինչ ի յանից արանց իմաստնց եւ յայտնի փառխոնակաց, յորոց մեք արգարտպէս ջանացաք հաւաքել զհնագրութիւնս: Եւ ասեմք լինել արդարաբան ի պատմութեանս յայտնի ըստ մերոյ յօժարութեան և ուղղամտութեան. իսկ ըստ որոց հաւաքումն, Աստուծոյ լինել յայտնիս և մարգական գովելիս կամ բարեկիս և մեք այնոցիկ օտար և բացակայեալ, Բայց զուգութիւն բարբառոյ և հաւասարութիւն թուոյ կարգի պատանեաց՝ զճմարտութիւն աշխատասիրութեանս մերոյ ակնարկէ: Եւ այսոցիկ այսպէս կարգելոց, կամ հաւասար կամ դոյզն ինչ կասեալ յարգարոյն, սկսայց ինչ եւ որ ինչ զկնի այսոցիկ ի հիւսման պատմութեան պիտոյց» (Ա. ԺԹ.):

Աղբիւրների այս ընդհանուր յիշատակութիւնը մնում է մինչև Ա. զբքի վերջը, և մինչև Բ. զբքի Ժ. զլիսի վերջը, ուր յիշում է. «Աստանօր սպառնի բանք ծերունոյն Մար Աբաս Կատինայ» Կրնշանակէ այդ պատմու-

1. Ենթին. Միաբանը Շամիրամի մահը Խորենացու մէջ՝ Մար Աբասից քաղած չէ համարում, այլ առասպելից: Երե այս հայեացքը, որ սակայն կասկածնիլ է, մինչ լինի, այն ժամանակ Շամիրամի մահուան պատմութիւնը չէր էլ կարող հարկաւ լինել Անանունի մէջ:

1. Ա. սեւակի մեղագիրներն ունին «յօրինելով», № 616: «որինակելով»:

Թիւնների համար ի միջի այլոց օգտուել է և Մար Արասից¹։ Բայց պատմութեան ամբողջութիւնը և խորենացու բառերով ասենք՝ «մերոց աւագագոյն արանց և նախնեաց»՝ «մերոց արանց՝ ժամատանդ թաղաւորաց»՝ «պատանեաց»՝ ժամանեաց մերոց պատկաւորաց» (Ա. իգ) անուանների «կարգը» իրեն պատմագրի «յարմարածն ու կարգածն է»։

Սակայն աղբիւրների այս ընդհանուր յիշատակութիւնից յետոյ՝ նա այս կամ այն պատմութիւնների համար մասնաւոր աղբիւրներ էլ է յիշում։ Այսպէս ԺԺ՝ ԻԱ. գլուխների մէջ յիշուած կան զանազան անորոշ ձեւերով աղբիւրներ²։ Մար Արասի անունը ոչ մի անգամ չէ տալիս։ Եւ մենք Անանունի մէջ ևս այդ պատմութիւնից ոչինչ չենք գտնում։

ԻԲ. գլխի մէջ Բագրատունեաց ծագման համար իրրեւ աղբիւր գնում է նախ անորոշ ձեւերով՝ «ասեն» և ապա որոշ ձեւով՝ «ասէ պատմագիրն» (Մար Արաս։ Եւ մենք Անանունի մէջ գտնում ենք յիշուած Բագրատունեաց ծագման մասին (Սեր' ոսկեր' 9)։

ԻԳ. գլխի մէջ, Սենեքերիմի մասին խօսելիս՝ երկու անգամ յիշում է «պատմագիր»։

1. Տես Ա. ք. «Յորմե (Մար Արասից) մեր հաւատքի ի վերայ հասնող կարգի զուգացու՝ երկարողով աշխատեալ հաշուարկութեանց, ձգելով զմեր բնիկ նախաւորութիւնս միմեզէ ցազգեացսց Սաւորաւապաղայէնէ և ևս մօտադրելէ»։

2. ԺԺ. գլխի մէջ, Դերսեկեաց ծագման մասին, «Առաջեալ հաւատքի գտաւ... քոր և բարձր սրանց աղբի յայնմ ի սանձանցի զոյ»։ Հայկաթի համար՝ «ասեն»։ Զարմաթի համար՝ «էլ մի աղբիւր»։ Բայց յետոյ ԼԲ. գլխի մէջ ինկք կապանում էս որ Արթուրից սպանուած ինկ Զարմաթը։ ԼԵ. գլխի մէջ՝ «արեւ հազնեղարիսն՝ աղաւաւսի ի բան»։ Յիշում է քե Գարսի պատմութիւնն «սու աշխատաւորաց պատմ»։ Վերջն իրեւ աղբիւր բերանուր մեռով՝ «ի նկնի զիսանց, խաղաղաց, աւստեանեաց ևս պատմ»։

3. Ի գլխի մէջ, Արաշան Արաշի համար իրրեւ աղբիւր գնում է յայնմի «ասեն» մեռով ևս անմիջապէս Անուշաւանի համար շարունակում է. «Բայց յարեւ զկարգ բանիցս զկնի աշխարհի օրինակ զայն»։ Դերսեկեան այս կապանից պարզապէս երեւում էս որ և զալի «յաւե» խօսքը մեզն աղբիւրի համար էս որի համար վերելում յայնմի «ասեն» է գրած։ Դժուար քե Մար Արաս ինկ այդ աղբիւրը՝ Հմեմ. Մարտան. Խոր. Գաւս. Ուս. եր 73։

լըն»։ «նոյն պատմագիր» (Մար Արաս)՝ նախ Արծրունեաց և Գնունեաց՝ ապա Անգեղ տան ծագման մասին խօսելիս։ Եւ զարձեալ Անանունի մէջ գտնում ենք յիշուած Անգեղ տան ծագման մասին (Սեր' ոսկեր' 6)։ Բայց որ զլիաւ որն է այս ԻԲ. ԻԳ. գլուխների մէջ Մար Արասը յիշուած է ճիշտ այն տեղում և այնպիսի պարագաների մէջ, որ շատ նմանութիւն են բերում Անանունին։

Ըստ Անանունի, հայերը Սենեքերիմի մահից յետոյ զուրս են գալիս Ասորեստանցոց իշխանութեան տակից։ Արամանեակի (Հայկի) ցեղից չորս տիրապետ Զարեհ, Արմոգ, Սարհանգ, Ծաւաշ—ունենալուց յետոյ՝ հինգերորդի՝ Փառնուաղի ժամանակ հնազանդում են Բաբելացոց Նաբոգոդոնոսոր թագաւորին։ Եւ այնուհետեւ տիրում են հայերին Բաբելացիք։ Մարք, Մակեդոնացիք մինչև ցհամարք մի Արշակունեաց թագաւորութեանն։ Խորենացին զիսէ Ասորեստանցոց իշխանութիւնից ելնելու այս իրողութիւնը։ Միայն նման և մօտիկ լինելով հանդերձ՝ նորա անունների շարքը և թագաւորութեան երկարատեւութիւնը տարբեր են Անանունից։ Ըստ Անանունի՝ Սենեքերիմի մահից յետոյ են անկախութիւն ձեռք բերում հայերը և իշխում են Հայկի սերունդները։ Ըստ Խորենացու՝ Սենեքերիմի ժամանակակից Սկայորդուն յաջորդող Պարոյրից է սկսում հայոց բնիկների, Հայկի սերնդի թագաւորութիւնը։ Անանունը Փարնուաղով յիշելով նորա որդիներին՝ Բազամ և Բազարամ, վերջացնում է այդ իշխանութիւնը։ Բայց Խորենացին իւր Հայկազանց թագաւորութիւնը ձգում է և Մարայ և Պարսից թագաւորութիւնների ժամանակ։ Ուստի Փառնուաղից՝ յետոյ հինգ լոկ անուններ է գնում մինչև Տիգրան, երգը յիշելով վերջին պատմութեան համար իրրեւ աղբիւր և զարձեալ երկից ասնելով՝ Տիգրանի յաջորդն է գրած Վահագն տառուածը, և հիմերարար մարդ զարծարած։ Եւ այնուհետեւ մինչև Մակեդոնացիք զարձեալ մի քանի լոկ անուններ է շարում՝ Առաւան, Սերսէհ, Արմոգ, Բազամ, Վան, Վահէ։

1. Ըստ Տաղարի և Փառնուաղի, Բայց շատ մեղադրելի մէջ Փառնուաղ է։

Այս եօթն անուններից միջի երեքը նոյն են, ինչ որ Անանունի մէջ՝ սկզբի երկուս և վերջի մէկ՝ անունները. Զարեհ, Արմիզ, Մարհապ, Շաւաշ, Փառնաւաղ, Բազում: Հաւանորէն այս երեք անունը Սորենացին Մար Արաւից է առած և՛ չկարողանալով առանց Տիգրանի ժամանակը խախտելու, Տիգրանից առաջ տեղաւորել, տարել յետ է գրել:

Հարկաւ, նա կարող էր Պարսոյ, Հրաշեայ, Պաճոյճ, Կոռնակ անունների տեղ, Փառնաւաղից առաջ Մար Արաւի (ըստ Անանունի) այն հինգ անունները դնել: Սակայն նա այդ չէ արել, որովհետեւ Պարսոյ և միւս անունների համար, ուրիշ աղբիւր է ունեցել և այդ աղբիւրին, ինչպէս յետոյ կը տեսնենք, աւելի հաւատ է ընծայել քան Մար Արաւին: Միակ անունը որ Մար Արաւից տանելով մացրել է Տիգրանից առաջ ցանկի մէջ, դա Փառնաւաղն է: Եւ այս առանց նպատակի չէ: Հարկաւոր էր բաց չթողնել Բաղրատունեաց ծագումը հրէաներից:

Ըստ Մար Արաւի (Սորենացի) Բաղրատունիք ծագում են Մարուգոգոնոսորի զերած հրէաներից: Սոցանից մէկին հայոց թագաւորը (որ երեւի բարեկամ է Մարուգոգոնոսորին) խնդրում է Մարուգոգոնոսորից և բերում բնակեցնում է իւր երկրում, «և ի սմանէ, առէ պատմադիրն (Մար Արաւ) լինել գողզն Բաղրատունիս: Արդ, ըստ Անանունի Մարուգոգոնոսորի ժամանակակիցն է Փառնաւաղ որ և հնազանդում է Մարուգոգոնոսորին: Ընշա է, Անանունի մէջ (եր. 9) Բաղրատունեաց նախահայր Բազարատան Փառաւղան» է. «յորդ, ոցն Արամենակայ, նա այստեղ հրէական ծագում չունի: Բայց այդ պիտի համարել կամ Անանունի հեղինակի այսինքն Մար Արաւից քաղաղի մացրած փոփոխութիւնն քանի որ, Սորենացու պարզ վկայութեամբ, Բաղրատունիք հրէական ծագում ունին ըստ Մար Արաւի, կամ թէ գրչագիրների մացրած բան պիտի համարել: Եւ այս վերջինը աւելի հաւանական է թւում մեզ: Գրչագիրները շատ հեշտ կարող էին Փառաւղան Բազարատին, որ հայոց առաջին արշակունի թագաւորին ընդառաջ է ելնում շփոթել վերեւում (եր. 6) յիշուած Բազարատի (Պատ-

կանան ուղղում է Բազարատ) հետ որ նոյնպէս Փառնաւաղի որդի է և որդի որդւոց Արամենակայ: Նոյն իսկ Պատկանանի նման մէկը (Սերէոս, եր. 6. ծան.) Մարուգոգոնոսորի ժամանակակից այս Փառնաւաղի որդի Բազարատին շփոթած է երեսմ Փառաւղան Բազարատի հետ չնայելով որ այս երկուսը ժամանակով իրարուց շատ հեռու են և նոցա ապրած ժամանակի մէջ կայ Բաբելոնացոյ, Մարաց և Մակեդոնացոյ արքայատութիւնը:

Արդ, եթէ, ըստ Մար Արաւի (Անանունի) Մարուգոգոնոսորի ժամանակակից և նորան հնազանդող է Հայկի սերնդից Փառնաւաղ և, Սորենացու պարզ վկայութեամբ, ըստ Մար Արաւի Մարուգոգոնոսորի ժամանակակից հայկազն թագաւորը խնդրում է նորանից Բազարատունեաց նախահայր, ուրեմն մի պատահական բան պիտի չհամարել այն, որ Սորենացու Հայկազն թագաւորների ցանկի մէջ Փառնաւաղ անունը գտնում ենք ճշտ այնտեղ, ուր նա, ըստ Սորենացու ժամանակագրութեան, ժամանակակից է գաւրս գալիս Մարուգոգոնոսորին: Ըստ Սորենացու ժամանակագրութեան, (սխալ կամ ուղիղ, այդ մասին չէ մեր խօսքը) Մարուգոգոնոսորն ապրում է ութուոյն տարին «առէլի կամ պակաս» Սկեռքերիմից յետոյ, որի ժամանակակից է մեր Սկայրդին (Ա. իգ.). Արդ, Սկայրդու շրջապատը յաջորդն է Փառնաւաղ, երեք չորս սերունդ ուրեմն պիտի է լինելին այդ մօտ ութուոյն տարւոյ ժամանակամիջոցը: Այսպէս ցանկի մէջ:

Ծանկի տակին սակայն Բաղրատունեաց ծագման մասին գրածով, որ Մար Արաւից է առնում Մարուգոգոնոսորի ժամանակակից է ոչ թէ Փառնաւաղը, այլ Փառնաւաղի հայրը՝ Հրաշեան, որ և խնդրում է Շամբովին Մարուգոգոնոսորից: Բայց այստեղ բնագրի աղասաղում կայ: Գրչագիրների մէջ է միայն Հրաշեան անցել Փառնաւաղի տեղ, և իսկապէս վերջինս պիտի է լինի Մարուգոգոնոսորից Շամբովին խնդրողը:

Թագաւորների իննանուն ցանկի երեսմեք սակաւակեաց և Տիգրան անուններից յետոյ գտնում ենք հետեւեալը. «Բանդի և վերջին

Երուանդս¹ և Տիգրան ի սոցանէ ըստ յուսոյ կոչեցեալ ասեմ² արդեւք՝ ոչ կարի հեռագոյն գոլով ժամանակին, յիշեցուք զանուանս զայսոսիկ: Հրաչեայ, սա կոչի վասն առաւել պայծառերես և բոցակնազոյն իմն լինելոյ: Առ սովաւ ասեն կեցեալ զՄարուգոդոնոսոր արքայ բարիլացոց»... Հ. Ստեփանէն (Եր. 378 Ծանօթ. 133) նկատում է, որ այս հատուածի առաջին մասը (մինչև Հրաչեայ) անհասկանալի է բոլոր թարգմանիչներին: Եւ արդարեւ եթէ Երուանդ և Տիգրան անուններն արդէն յիշուած կան ցանկի մէջ, էլ ի՞նչ իմաստ ունի ասել թէ, որովհետեւ վերջին Երուանդն և Տիգրան և ինչ ուստի յիշենք անունները²: Հ. Ստեփանէն այդտեղ բնագիրն աղաւաղուած է համարում և աղաւաղումը գտնում է «անտեղի կէտագրութեան» մէջ, որ ուղղում է «արդեւք» բառից յետոյ եղած միջակէտը ստորակէտ դարձնելով իսկ «ժամանակին» բառից յետոյ ստորակէտի տեղ վերջակէտ դնելով: Եւ այնուհետեւ, Երուանդ և Տիգրան անուններն ընդունելով Երուանդ երկրորդի և Արշակունի Տիգրանի համար ասած, թարգմանում է այդ հատուածը. «Վերջին Երուանդ [Երկրորդ] և Տիգրան [Արշակունի] թիւրևս սոցա [հայկազն Երուանդի և Տիգրանի] անունով են կոչուած, սոցա նմանող լինելու յուսով միջոցը շատ հեռու չլինելով: Երկնք այս անունները»...:

Հ. Ստեփանէն շատ ճիշտ ըմբռնել է սխալը և այդ հատուածի իմաստը. և այս վիճելի կարելի չէ համարել: Որովհետեւ Խորենացին «սա» գերանունն է միշտ գործածում ցանկի մէջ յիշուած վերջին անուն համար (օրինակ Յեսուի, Զարմայրի համար), ուստի և «ի սոցանէ» գերանունն տակ պէտք է հասկանալ ցանկի վերջին երկու անունը՝ Երուանդ սակաւակեաց և Տիգրան: Իսկ Տիգ-

րանները նա որոշում է առաջին, միջին և վերջին անուններով (Բ. Ժգ. կդ.), Երուանդ սակաւակեացին անունում է առաջին (Բ. կե), ուստի կարող էր Արշակունի Երուանդին ևս վերջին անուններ: Միւս կողմից ըստ յուսոյ կոչել» նոյն իմաստով գտնում ենք Խորենացու մէջ և ուրիշ տեղ (Բ. Ծէ.), «Որոյ որդի իւր մեծահասակ և ուժեղ, Սամսն անուն կոչեցեալ, որպէս սովորութիւն է հրէիցն՝ ըստ յուսոյ զնախնեացն կոչել անունն»: Իսկ սկզբի քանզի շաղկապը շատ յաճախ «որովհետեւ» չէ նշանակում այլ միայն իւր շաղկապի իմաստ ունի: Այսպէս, այդ անհասկանալի համարուած հատուածը կատարելապէս պարզուած է՝ կէտագրութիւնն ուղղուած լինելով: Տեսնենք շարունակութիւնը:

Այնուհետեւ Խորենացին գրում է յոգնակի թուով. «Երկնք զանուանս զայսոսիկ: Այդ յիշելիք անունների տակ ուրեմն այլ ևս Երուանդ և Տիգրան հասկանալ կարելի չէ, այլ ուրիշ անուններ պիտի լինին: Բացի այդ՝ յոգնակի թիւը յոյց է տալիս ետևից պիտի յիշուին մէկից աւելի անուններ: Սակայն մենք գտնում ենք միայն մի անուն. «Հրաչեայ, սա կոչի...: Առ սովաւ ասեն»...: Կրնշանակէ այստեղ մի անուն պակասում է և յատկապէս «առ սովաւ» խօսքից առաջ, որովհետեւ գրածի իմաստն էլ ուրիշ ոչ մի տեղ թոյլ չի տալ նոր անուն մտցնել: Արդ, ի նկատի ունենալով, որ այդ պակասող անունը կրողը Մարուգոդոնոսորի ժամանակակից պիտի լինի, և որ ըստ Խորենացու իննանուն ցանկի Փառնաւազն է ընկնում Մարուգոդոնոսորի ժամանակները, և որ ըստ Մար Աբասի (Անանուն) Փառնաւազն է Մարուգոդոնոսորի ժամանակակից, — այդ պակասած անունն ուրեմն Փառնաւազ ևս պէտք է լինի: Այսպիսով վերականգնած բնագիրը կըստանանք: «Երկնք զանուանս զայսոսիկ: Հրաչեայ, սա կոչի վասն առաւել պայծառերես և բոցակնազոյն իմն լինելոյ: Փառնաւազ, առ սովաւ ասեն կեցեալ զՄարուգոդոնոսոր արքայ բարիլացոց»...:

Մի նկատողութիւն ևս: Խորենացու ձեռագիրներից երևում է, որ ԺԹ. զլիսի անունների ցանկն ու մի քանի անունների մա-

1. Զեռացիների մէջ նաև առանց ս թափ. «Երուանդ և Տիգրան» այլ «զվեցին Երուանդ և Տիգրան» են:

2. Այդ պատճառով և անշուշտ ապտոնի յիշեցում մեզ դարձնող անցեալ յիշեցում (№ 1665), յՅ (= յիշեաց ?) ոք (№ 1671), յիշեց (= յիշեաց) ոք (№ 616), վերջին յՅ, յիշեց մեծերն ունին գլխին պատիւ մշանք, իսկ ոք առանձին և գրուած:

սին դրած ծանօթութիւնները, ինչպէս և ի՞նչ. գլուխը մանաւանդ վերջը խիստ աղաւաղուած են: Առանց մանրամասնութեանց մէջ մանկու՝ ասեմք, որ թեթեւ հայեացքով անգամ մարդ խելոյն տեսնում է, որ անունների ցանկն այնպէս վերելից ներքե սիւնակներով չէ գրուած եղել բնագրի մէջ, ինչպէս այժմ տպագրի մէջ է և շատ ձեռագիրների մէջ: Այլ մի տողի վրայ, ետեւէ ետեւ. նախ երրայեցոց, յետոյ քաղղէացոց և ապա հայոց անունները: Իսկ այս կամ այն անունի վրայ եղած ծանօթութիւնները անմիջապէս շարունակութեամբ գրուած են եղել անունից յետոյ: Այսպէս երրայեցոց ցանկը սկզբից մինչև Յեսուս որից յետոյ անմիջապէս պէտք է շարունակել. «ի սմանէ յառաջ՝ ոչ ըստ կարգի... զայս և բարք աղղի յայանն քանսնացի գոլ»: Այստեղից անմիջապէս պէտք է շարունակել երրայեցոց անունները բոլորը մինչև վերջը և ետեւից քաղղէացոց և ապա հայոց անուններն այսպէս. «Գոթնիէլ՝ Աւովդ... Դաւիթ և որ ի կարգին: Բաղղէացոց՝ Առիոս, Առալիոս, Սուսառիս... Տեառնոս: Իսկ մերոյն Արայի որդի՝ Արայ ի Շամիրամայ կոչեցեալ, և զգործ վերակացութեան աշխարհիս նմա հաւատացեալ: Իսկ նորս 1 Անուշաւան, Պարէտ... Սուր: Առ սովաւ ասեն Յեսու որդի Նաւեայ 2: Հաւանակ... Հայկակ: Զամանէ 3 ասեն լինել... և մեռանել ի նմին: Ամպակ... Զարմայր: Սա օղնական Պրիամու... ելլենացոց: Պերճ... Սիւյորդիս:—Նոյն ձեռով և ի՞նչ. գլխի մէջ մի տողի վրայ, ետեւէ ետեւ. «Մարաց առաջին՝ Վարբակիս... Աժգահակ: Իսկ մեր առաջին ի Վարբակայ պսակեալ Պարոյր... Տիգրան»:—Ինչպէս որ այստեղ հա-

յոց անուններն սկսուած են «իսկ մեր առաջին»... խօսքերով, ճիշտ այդպէս և ժԹ. գլխի մէջ հայոց անունների ցանկն սկսուած է եղել. «իսկ մերոյն Արայի որդի»... խօսքով: Այս պատճառով հայոց անունների գլխին դրած «հայոց» բառը նոր մտքորած բան պէտք է համարել, անհրաժեշտաբար առաջ եկած անունները սիւնակներով գրելուց 1

Երբ այսպէս տեսնում ենք թէ ինչպէս Խորենացին այս կամ այն անունի վրայ եղած ծանօթութիւնն անմիջապէս անունից յետոյ կցում է «սա» դերանունով, այն ժամանակ հասկանալի է լինում թէ ինչու. Հրաչեայի և Փառնաւազի մասին գրելիք ծանօթութիւնն սկսում է «յիշեսցուք զանուանս զայսոսիկ» խօսքերով: Այստեղ գրելիքն անմիջապէս անունների ետեւից չէ դրած, ուստի և պէտք էր անունները կրկնել և նոր դնել ասելիքը. «Յեշեսցուք զանուանս զայսոսիկ. Հրաչեայ, սա կոչի... Փառնաւազ, առ սովաւ ասեն... Այս ժամանակ ճիշտ դատելով, անհրաժեշտ է Հրաչեայ և Փառնաւազ անուններից յետոյ եղած միջակէտը (իսկապէս բութը), որ զրտնում ենք ձեռագիրների մէջ, և որ ի զուր տեղն աւելորդ են համարում ոմանք:

Բնագիրն այսպէս վերականգնելուց յետոյ բոլորովին պարզ երևում է Խորենացու Մար Արասի և Անանունի համեմատութիւնը: Երկու դէպքում էլ, ուրեմն և Մար Արասի բնագրի մէջ, Նաբուքոդոնոսորի ժամանակակից է Փառնաւազը: Նւ քանի որ Խորենացին պարզ յայտնում է, որ ըստ Մար Արասի Բաղրատունիք ծագում են այն հրեայից, որին Փառնաւազն ստանում է Նաբուքոդոնոսորից, ուստի և շատ պարզ է, որ Փառնաւազ անունը ուրիշ աղբիւրից առած ցանկի մէջ մտնում

1. Տպագրի մէջ լիակ այս երկու բառեր՝ որ ցրտում ենք շատ ձեռագիրների մէջ, և որ անհամեմատ են:

2. Այս ընդգծած բառերը նշանակաւ լիակ Տպագրի մէջ:

3. 2եռ. № 616. Տպագրի և շատ ձեռագիրների մէջ զՀայկակ, զՀայկակայ, ի Հայկակ եւլն ձեռներ: Ճիշտ ընթերցումը պէտք է զսմանէ ձեռն ընդունել, քանի որ մնացածները բոլորն ևս «սա» դերանունով ունին: Հայկակ անունն կրկնութիւնը յառաջ է եկել գրչապիւնների մէջ անհետանալով և իբրեւ ծանօթութիւն գրութեան մեծ մեծիւց յետոյ, անորոշութիւն շատացնելու համար անշուշտ:

1. Սիւնակներով գրելուց յետոյ, ինչպէս Տպագրի մէջ է, Արայ անունն ետեւից ծանօթութիւն դնել իսկ շաղկապով, «իսկ մերոյն Արայի որդի»... մի անմիջական է: Երկ այդ հաստատու ծանօթութիւն չիկեր, այն ժամանակ ետեւեացին իւր սովորական մեծով կրգրէր. «Աս մերոյն Արայի որդի»... Այդ աղաւաղուած դասաւորութիւնից առաջացած մի սխալ բարգմանութիւն է արեւ Հ. Սեփական. իսկ շաղկապը դարձնելով իսկապէս մականայ, Այստեղ իսկ շաղկապով սկսում է Հայոց անունները նոյն մեծով, ինչպէս և մեր բազմաթիւ անունները:

է Մար Աբասից, միմիայն Բագրատունեաց ծագման պատմութիւնը բաց չթողնելու համար¹։ Այսպիսի բան հեշտութեամբ կարող էր անել քանի որ նա «յարմարելով է կարգում ամենը»։ Իսկ թէ այդպէս Մար Աբասից առած Փառնաւազը կրգառնար մի ուրիշ աղբիւրից առած Հրաշնայի որդի, ուստի և «դոյզն ինչ կասեալ յարդարոյն» այդ կարող չէր արգելք լինել մեր պատմագրին՝ իրեն «արդարաբան» կոչելու։ Բաւական էր, որ նա հաւատացած էր, որ Մար Աբաս ճիշտ է գրում, և ինքը ճշտութեամբ առնելով հայկազն Փառնաւազին հայկազն թագաւորների շարքի մէջ՝ իւր տեղում և իւր ժամանակին՝ Նարեկագոգոնոսորի օրով էր դնում։

Խորենացին այնուհետեւ էլ չէ յիշում Մար Աբասի անունը։ Ծորանից ուրիշ բան առած էլ չէ կարող լինել քանի որ ինքն էլ — մէկդի դրած Տիգրանի պատմութիւնը, — ուրիշ բան չունի, բացի երգից առած Վահագնից և անունների լոկ ցանկից և մի քանի ստուգաբանութիւններից՝ Առաւանից Առաւանեանք, Զարեհից Զարեհաւանիցն ազգ։ Եթէ նոյն իսկ Զարեհ, Արմոզ, Բազամ՝ անունները Մար Աբասից առած լինի, սորա անունը տալու կարիք չունէր մէկ՝ որ սոսկ անուններ են։ մէկ էլ որ այնքան ազատութեամբ է օգտուում, ժամանակով յետ տանելով դոցա։

Մենք թողնում ենք Բ. զրքի վաղարշակի և Արշակի պատմութիւնները համեմատել Անանունի հետ։

Խորենացու Մար Աբասի և Անանունի այս համեմատութիւնն արգէն պարզ ցոյց է տալի մեզ, որ ինչ որ Խորենացին Մար Աբասից է առնում՝ Մար Աբասի անունով էլ յիշում է։ Չէ խորշում նոյն իսկ միւսնոյն գլխի մէջ, մի քանի տող յետոյ, նորա անունը կրկնելուց։ Մար Աբասի համար առանց անունը տալու միայն «ասէ» գործ է ածում Ժ. ԺԱ. և ԺԲ. զլուսնների մէջ, բայց միշտ այն դէպքում, երբ վերեւում մի երկու անգամ յիշել է նորա անունը և յայտնել, որ

նորանից է քաղում։ Իսկ որտեղ Մար Աբասի անունը չէ տալի, այդ առած է ուրիշ աղբիւրից, ուստի և չկայ Անանունի մէջ՝ որ պատահականութիւն համարել չենք կարող։

Այս ի նկատի ունենալով՝ զարմանալի կրկնէր, որ մեր պատմագիրը Մար Աբասից քաղելիս միշտ յիշէր նորա անունը։ յիշէր նաև զանազան աղբիւրներից «յարմարած ու կարգած» պատմութեան մէջ. ետեւէ ետեւ կրկնէր անգամ փոքրիկ դէպքերում (Ա. ԻԲ. ԻԳ), իսկ Տիգրանի և Աժդահակի ընդարձակ պատմութեան մէջ զանց անէր այդ Պարզ դատողութիւնն ասում է, որ Տիգրանի և Աժդահակի առասպելը կարող չէ Մար Աբասից առած լինել։

Միւս կողմից՝ այս յենում է և անոր վրայ, որ Տիգրանի և Աժդահակի մասին յիշատակութիւն անգամ չկայ Անանունի մէջ։ Իսկ մենք տեսնք թէ որքան զուգընթացաբար իրար համեմատ են Խորենացու յանուանէ յիշած Մար Աբասի և Անանունը։ Անանունի հեղինակը, Մար Աբասից քաղելիս կարող էր դուրս ձգել մի երկու դէպքեր, ինչպէս են Արծրունեաց ու Գնունեաց ծագման պատմութիւնը, թերեւ և Շամիրամի մահը։ Բայց որ նա դուրս ձգէր Մարաց թագաւորին սպանող ու նորա երկրին տիրող Տիգրանի ընդարձակ ու նշանաւոր պատմութիւնը և, որ գլխաւորն է, Հայկի սերնդի իշխանութիւնը վերջացնէր Նարեկագոգոնոսորի ժամանակ և մէջ բերէր Բարեկացոց ու Մարաց իշխանութիւնը հայոց վրայ, — այդ զժուար է ենթադրել։ Մնում է միայն ընդունել, որ Մար Աբասի մէջ չէ եղել Տիգրանի մասին յիշատակութիւն, ուստի և չկայ Անանունի մէջ։ Փոփոխողը, աւելացնողն ու յարմարողը Խորենացին է և ոչ թէ Անանուն։

Խորենացին, ուրեմն, Տիգրանի առասպելն ուրիշ աղբիւրից առնելով՝ հիւսել է իւր պատմութեան մէջ, Կամ աւելի ճիշտ ասած, եթէ Հայկազանց թագաւորներից Փառնաւազի անունն ու Բագրատունեաց ծագման պատմութիւնը (թերեւ և Զարեհ, Արմոզ, Բազամ անունները) Մար Աբասից է առած, պատմութեան ամբողջ ծրագիրը, հիմունքը վերցրած է ուրիշ աղբիւրից։

1. ԻԲ. գլխի վերջի մասը, որ է Բագրատունեաց ծագումը, Ա. մեղացիների մէջ առանձին վերնագիր ունի։

Ո՞րն է այդ աղբիւրը, որի համար «ասէ՛ր, ասէ՛ր պատմէն» է դնում:

(Կր շարունակուի)

Մ. Արեղեան.



ԱՅԼԵՒԱՅԼԻՔ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ԴՐ. Կ. ՌԷԿԼԱՄԻ.

Գ.

ՄԱՐԺՈՒ ՄԱՐԺՈՒԹԻՒՆ.

Արտաքինը մարդու հոգու հայելին է: Երբ մէկի արտաքինն անմաքուր է և անկարգ, մարդ կասկածում է թէ բարոյականի կողմից էլ նա իսպառ մաքուր ու անքիծ չէ: Հէնց այս հանգամանքի պատճառով ամէն մարդ պէտք է հոգ տանի իւր մարմնի մաքրութեան մասին:

Մարդու արտաքին տեսքը ցոյց է տալիս և նորա առողջութեան վիճակը: Քաղաքների բնակիչներին մեծ մասի գունատ գէմքերը ցոյց են տալիս, որ նոքա չափից դուրս երկար նստած են մնում սենեակներում, շատ քիչ թարմ օդ են շնչում, քիչ են զբոսնում անտառում, պարտիզում կամ դաշտում, քիչ են շարժումներ անում: Աղքատների, կանանց ու աղջկեանց գէմքերի գունատութիւնը ցոյց է տալիս, որ նոքա վատ սնունդ են ստանում կամ կերակրեղէնի կանոնաւոր ընտրութիւն չեն անում: Երեխաների կարմրութիւնից զուրկ գէմքերն ապացոյց են, որ վատ են կազմակերպուած մեր դպրոցները, որ այնտեղ մաքուր օդ չկայ, որ չափից դուրս մեծ է դասերի թիւը, որ նոքա ծանրաբեռնուած են տնային աշխատութիւններով, ցոյց են տալիս ուրիշ շատ հանգամանքներ որ անհնարին են դարձնում առողջութիւն ամրացնելը:

Մարդու արտաքինը նորա հոգու և առողջութեան հայելին է հէնց այն պատճառով, որ արտաքինը սերտ կապուած է կազմուածքի ներքին պաշտօնակառարութեանց հետ: Ինչպէս որ կաշու մաքրութիւնը կախում ունի մարմնի կատարեալ առողջութիւնից, այնպէս էլ կաշու բնական առողջ վիճակը ազդում է ամբողջ մարմնի առողջութեան վրայ:

Մարդու կաշին մարմնի դանաղան մասերի

ձևն է ընդունում և նմանում է մի պարեկի կամ մի թերթ թղթի, որի մէջ որ և է առարկայ են փաթաթում: Որքան կաշին առողջ է լինում, այնքան կիպ ամուր կպած է լինում մարմնին: Վատ սնունդ ստացող, հիւանդութիւնից յետոյ նոր կազմութեամբ, հոգսերով ծանրաբեռնուած, նոյնպէս և ծեր մարդկանց կաշին հեշտութեամբ կախ է ընկնում և խորշումներ կազմում: Բայց կաշու նշանակութիւնը միայն այն չէ, որ նորանով կիպ ու հաւասարապէս ծածկուած է մեր մարմինը. նա ուրիշ շատ կարեւոր դեր է կատարում:

Կաշու գլխաւոր պաշտօնն այն է, որ հաւասարակշռում է մեր մարմնի ջերմութեան արտադրութիւնը: Մարդու կաշին կազմուած է մի առաձգական հիւստածքից, որի մէջ դեռեղունութիւն են բազմաթիւ նեարդեր ու արենատար անոթներ, այլ և շոշափման գործարանները, մազերի զլանածե արմատները, քրտնքի ու ճարպի բազմաթիւ գեղձեր:

Միջահասակ մարդու մարմնի ամբողջ մակերեսը հաւասար է մատուցաբերելու քառակուսի մետրի ուրեմն նոյն չափ տարածութիւն ունի և կաշին: Կաշու միջին շերտի մէջ գտնուում են մինչև 15 միլիոն փոքրիկ պաուկներ, որոնց մի մասը պարունակում է շոշափման փոքրիկ մարմիններ, որ զգայութեան նեարդերի ծայրերն են: Իսկ միւս մասը՝ արենատար անոթներն կապեր, որ մարմինը տաքացնելու համար են:

Բայց ոոցանից կաշու տակ գտնուում են մօտ երկու միլիոն քրտնքի կծկած գեղձեր, որոնց բաց բերաններն անց են կենում կաշու արտաքին շերտի միջով:

Գեղձերի արտադրած հեղուկներն անդադար շողիւնում են մեր կաշու արտաքին մակերեսութի վրայ և այդպիսով հովացնում են կաշին:

Եթէ ու ժեղացնենք արենադարձութիւնն ու նիւթերի վտխառնող թեան գործողութիւնը, գեղձերի բերաններից կամ ծակոտիներից դուրս կը գան փոքրիկ կաթիլներ, այդ կաթիլները միանալով թրջում են մարմնի մակերեսը և առելի են հովացնում: Երբեք ալ ժամանակ շոգիւս ցումը սաստկանում է:

Ամէն օր մարմինը լուսնային ու որրելը նպաստում է ոչ միայն նորա մաքրութեանը, այլ և գեղձերի բերանների միշտ բաց լինելուն: Երբ այդ ծակոտիները կեղտոտուելով փակուում են, այն ժամանակ արտադրութիւնները (ճարպ կամ քրտնք) հաւաքուում են կաշու տակ, յառաջ են բերում մանր բշտիկներ (պրուր): Սակայն պէտք չէ կարծել, թէ այն մարդիկ, որոնց երեսը պղուկներով է ծածկուած, անպատճառ անմաքաւթիւթիւնից են պղուկներ ունենում: